Ֆրանսիական Հեղափոխական

Ֆրանսիական հեղափոխություն (ֆր.՝ Révolution française), ամենամեծ հեղափոխությունը Ֆրանսիայի սոցիալական և քաղաքական կյանքում, տեղի ունեցած 18-րդ դարում, որի արդյունքում կազմաքանդվեցին հին կարգերը և Ֆրանսիան, դե յուրե, միապետականությունից վերածվեց հանրապետության՝ ազատ և հավասար քաղաքացիների համար: Կարգախոս- ազատություն, հավասարություն, եղբայրություն: Հեղափոխության սկիզբ դարձավ 1789 թվականի հուլիսի 14-ին Բաստիլի գրավումը, իսկ ավարտը 1799 թվականի նոյեմբերի 9-ը (բրյումերի 18): 18-րդ դարում Ֆրանսիան միապետություն էր, որ ապավինում էր քաղաքական կենտրոնացվածության և մշտական բանակի վրա: Երկրում սոցիալ-տնտեսական և քաղաքական դրությունը գնալով վատանում էր և իշխանությունները ստիպված էին փոխզիջումների գնալ, սա հետևանք էր 14-16-րդ դարերում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի: Այսպիսի մի փոխզիջում էլ կատարվել էր արտոնյալ խավերի նկատմամբ. քաղաքական որևէ նկրտումների դիմաց պետական իշխանությունները պարտավորվում են պահպանել այս դասակարգի շահերը: Մեկ այլ փոխզիջում կատարվել էր գյուղացիների հետ հարաբերություններում-պետությունը հրաժարվում էր գյուղացիներից հարկը գանձել գումարով, այլ բնամթերքով՝ սա ևս արդյունք էր 14-16-րդ դարերի գյուղացիական ապստամբությունների: Երրորդ փոխզիջումը կատարվեց բուրժուզիայի ներկայացուցիչների հանդեպ (այս ժամանակաշրջանում բուրժուազիան համարվում էր Ֆրանսիայի միջին խավը, պետությունը քիչ բան չէր արել այս խավի համար պահպանել էր արտոնությունները գյուղացիների և հասարակ քաղաքացիների նկատմամբ, և պահպանել նրանց իրավունքները 10 հազարավոր փոքր տնտեսությունների նկատմամբ):

Սակայն փոխզիջումային քաղաքականության արդյունքում է, որ 18-րդ դարում Ֆրանսիան ետ մնաց իր հարևաններից՝ գլխավորապես Անգլիայից: Բացի այդ մեծ չափերի հասնող բռնաճնշումները ավելի են մեծացնում զինված մասսաների հանդես գալու վտանգը: 18-րդ դարում անընդհատ Ֆրանսիայում այն գաղափարներն էին հասունանում, թե երկրի կառավարումը անկում էր ապրում, այն շատ էր հնացել: Սա այնքան էր խորացել, որ անգամ ապստամբությունների կողմն էին անցնում պալատական վերնախավի ներկայացուցիչներ: Սկսվեցին շրջանառվել մեծ լուսավորիչներ Մոնտեսքյոյի և Ռուսոյի գաղափարները, արդեն ասպարեզ եկան հեղափոխական գաղափարներ, թե ինչի վրա էր կառուցված լինելու ապագա հեղափոխությունը՝ կոորպորացիաների և մասնավոր ունեցվածքի վրա (Մոնտեսքյո), թե Ռուսոյի գաղափարներով, այն է մարդկային իրավունքների հիման վրա, այս հեղափոխական գաղափարների ձևավորման գործում մեծ դեր ունեին բառարանագետները, ովքեր կազմում էին Ֆրանսիական լուսավորության շրջանի գործիչների մի մասը: Վերջապես Լյուդովիկոս XV Բառարանագետի ժամանակ սկսվեցին բարեփոխումները և մեծ մասամբ շարունակվեցին Լյուդովիկոս XVI-ի ժամանակ, այս ռեֆորմները ի վերջո հանգեցնելու են հին կարգերի քայքայմանը:

Բնույթը

Մարքսիստ պատմաբանները նշում են, որ այս հեղափոխությունը կապիտալիստական բնույթի էր և անվանում են այս հեղափոխությունը բուրժուական, նրանք հիմք են ընդունում այն հավանական տեսակետը, որ բուրժուաները մեծ դեր են ունեցել այս ապստամբության: Շատ պատմաբաններ համաձայն չեն այս տեսակետի հետ և առաջադրում են[1] հետևյալ տեսակտեները.

1. Ավատատիրությունը Ֆրանսիայում վերացել է հեղափոխությունից մի քանի հարյուրամյակ առաջ.

2. հեղափոխությունը միավորել է ոչ միայն խոշոր հողատերերին, այլ նաև խոշոր կապիտալիստներին[2]:

3. հենց Ֆրանսիական արիստոկրատիան է հեղափոխությունից 25-30 տարի առաջ զարգացրել կապիտալիստական հայացքները[3]:

4. հեղափոխությունը սկսել են հասարակ մարդիկ, ովքեր որևէ արտոնություններ չունեին, այնուհետև նրանց են միացել բուրժուազիայի ներկայացուցիչները, ովքեր ներկայացնում էին Ֆրանսիայի միջին դասակարգը[4]:

5. նրանցից շատերը, ովքեր հրաժարվեցին իշխանությունից մեծամասնությունը, ոչ թե բուրժուազիայի ներկայացուցիչներ էին, այլ հարուստ ազնվականներ, ովքեր բարձր պաշտոններ էին զբաղեցնում իշխանության մեջ հավաքում էին հարկեր և այլն[5]:

Դասային արտոնությունների վերացումը

Վստահության խորհրդի օգոստոսի 4-ից 11-ի դեկրետներում վերացան ավատատիրական տուրքերը՝ սենյորական դատարանները, եկեղեցական տասանորդը, մի քանի նահանգների, քաղաքների, կազմակերպությունների արտոնությունները, բոլորը հայտարարվեցին հավասար օրենքի առջև: Ֆրանսիայում յուրաքանչյուր ոք՝ առաց դասային տարբերության, կարող էր ստանալ պետական և եկեղեցական պաշտոն: Միևնույն ժամանակ վերացվեցին գյուղացիների հարկերի մի մասը՝ միայն, այսպես կոչված, անուղղակի հարկերը, մնացին միայն իրական հարկերը՝ հողի հարկ և գլխահարկ:

Մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիա

1789 թվականի օգոստոսի 26-ին Վստահության խորհուրդը ընդունեց դեկլարացիա մարդու և քաղաքացու իրավունքների մասին-մեկն առաջին դեմոկրատական կոնստիտուցիոնալ փաստաթղթերից, սա ընդունվել էր ընդդեմ արտոնությունների, պետք է իշխանություններն ապահով էին բոլորի հավասարությունը օրենքի առջև, ազգային ազատություն, խղճի, մտքի և դավանանքի ազատություն: Դեկլարացիան միևնույն ժամանակ հաստատեց մասնավոր սեփականության իրավունք:

Արշավանք դեպի Վերսալ

Հոկտեմբերի 5-ին սկսվեց արշավանք դեպի թագավորի նստավայր՝ Վերսալ, որպեսզի ուժով կարողանան ստիպել թագավորին ստորագրել դեկրետները և դեկլարացիան, ով մինչ այդ հրաժարվում էր վավերացնել վերը նշված դեկրետները և դեկլարացիան: Միևնույն ժամանակ ազգային ժողովը հրամայեց ազգային գվարդիայի հրամանատար Լաֆայետին՝ գվարդիականներին տանել Վերսալ: Իմանալով այս մասին՝ թագավորը փախավ Փարիզ՝ Տյուիրլի ամրոց:



Հեղափոխությունը ոչնչացրեց հին կարգերը և հաստատեց նոր դեմոկրատական կարգեր: Սակայն, խոսելով հեղափոխության ընթացքում տված զոհերի մասին, շատ պատմաբաններ գտնում են, որ կարելի էր ավելի քիչ զոհերի միջոցով հասնել դրան: Ինչպես ցույց է տալիս ամերիկացի պատմաբան Պալմերը որ հեղափոխությունը չէր կարող ազդել Ֆրանսիայում կես դար հետո տեղի ունեցած դեպքերի վրա: Ալեքսեյ Տովիլը գրում է, որ Ֆրանսիայում այս հին կարգերի քայքայումը տեղի կունենար և առանց հեղափոխության: Պիեռ Գուբերը նշում է, որ հեղափոխական շատ գաղափարներ իրագործվեցին Նապոլեոնից հետո իշխանության եկած Բուրբոնների ժամանակ: Հեղափոխությունը բերեց մեծ քանակությամբ զոհեր: 1789-1815թվականներին զոհվեց 2 միլիոն քաղաքացիական անձ և 2 միլիոն զինվոր: Նման պարագայում միայն հեղափոխության ընթացքում զոհվեցին Ֆրանսիայի բնակչության 7,5%-ը, չհաշված այս տարիների սովից և հիվանդություններից մահացածերի թիվը: Նապոլեոնի ժամանակաշրջանից հետո՝ Ֆրանսիայում, այլևս չափահաս տղամարդ չէր մնացել, որ կարողանար կռվել: Միևնույն ժամանակ հեղինակները ցույց են տալիս, որ հեղափոխությունը ազատեց ժողովրդին դաժան բռնապետության լծից: Շատ հեղինակներ էլ պնդում են, որ սա Ֆրանսիայի ողբերգական ժամանակաշրջանն է, բայց, ամբողջությամբ վերլուծելով, հասկանում ենք, որ սա ժամանակի քաղաքական իրավիճակի թելադրանքն էր: Շատ գիտնականներ գտնում են, որ այս հեղափոխությունը մեծ արձագանք գտավ ամբողջ աշխարհում և որպես հետևանք նշում են Լատինական Ամերիկայում տեղի ունեցած հեղափոխությունները, ինչը լուրջ ազդեցություն ունեցավ 19-րդ դարում գաղութների վերացման վրա: